

Տ. ՄՈՒՇԵՂ ԱՔԵՂԱ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 հունիսի 2005 թ.)

«Ընտրեցէք այսօր թէ զո՛ւ պաշտօնեցէք»:

(Նեւո ԻԴ 15)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Նավէի որդի Նեսու, ով Մովսես մարգարեից հետո սրանձնել էր իսրայելացիների առաջնորդի դերը, փարիսների դեգերումներից հետո երբ նրանց Ավետյաց երկիր բերեց, դիմեց իսրայելացիներին, հորդորեց նրանց կողմնորոշվելու, թե ում պիտի Տեր և Աստված ընդունեն ու պաշտեն, իրենց Աստծո՛ւն, Ով առաջնորդել էր ժողովրդին դժվարությունների, նեղությունների ժամանակ, որ-երկիր էր պարգևել առանց «սրի ու աղեղի», թե՛ այն չաստվածներին, որոնք պաշտվում էին բնակեցված երկրներում:

Բոլոր քրիստոնյաներին քաջ հայտնի ճշմարտություն է, որ Աստված է երկնքի ու երկրի արարիչը, Նա է Տերը երկրի յուրաքանչյուր անկյունի, և Նրա ձեռքի գործերն են այս աշխարհում բնակվող բոլոր էակները: Այլ հարց է, թե մենք Աստծո ստեղծած բարի, երանությանամբ ու օրհնությամբ լի այս աշխարհը, մարդու հոգևոր խաղաղությանն ի սպաս տրված աշխարհը վերածել ենք ոչ միայն ճշմարիտ՝ Արարիչ Աստծո, այլև զանազան չաստվածների պաշտամունքի աշխարհի՝ մոռանալով մեր իսկ գոյության բուն նպատակի մասին:

Այսօր աշխարհը, որ ստեղծվել է Աստծուց, այնպիսին չէ, ինչպիսին եղել է: Այսօր մարդը, ով ստեղծվել է Աստծուց, իր նախկին փառքի մեջ չէ: Աստծո ստեղծած բարին ԲԱՐԻ չէ այլևս: Աշխարհը աշխարհային, աշխարհիկ է խիստ, և այդ ամենում մեղավոր ենք մենք՝ Աստծո ապերախս մշակներս այս աշխարհի վրա: Փոխան գոհանալու տրված դրախտային պարգևների ու վայելքների համար, մարդն ավելիին ձգտեց, փոխան ներում հայցելու արածի համար, մեղքն իր նմանի արյամբ ոռոգեց, փոխան արցունքով ապաշխարելու Աստծո արքայությունը ջրհեղեղեց այս աշխարհը՝ է՛լ ավելի հեռանալով Աստծուց, ավելի հեշտ, ավելի դյուրին ու թեթև կյանք ընտրելով ու իրեն հաճելի իրեր աստվածացնելով:

Աստծո գթասրտության հաջորդ հանգրվանը Սելովմի մօտ՝ Ավետյաց երկրում Նրա հարցումն էր Նեսուի միջոցով. «Իսկ եթե ձեզ համար հաճելի չէ պաշտել Տիրոջը, ապա որոշեցե՛ք այսօր, թե ո՞ւմ եք պաշտելու. ձեր հայրերի՝ աստվածներին, որոնք գետի այն կողմում էին, թե՛ ամորհացիների աստվածներին, որոնց երկրում դուք բնակվում եք» (Նեւո ԻԴ 14):

Միրելի հավաքացյալներ, մենք էլ այսօր ենք կոչված որոշելու և ընտրելու, թե ում և որտեղ ենք ծառայելու: Աստծո՛ւն ենք ընտրելու մեզ որպես Տեր և ձգտելու վերականգնել բարի աշխարհը, թե՛ սաղանային ու նրա արքայականներին, բանգի թե՛ Ամենաբարին Աստված և թե՛ սաղանան էլ կամենում են մեր տները լինել և իրենց աշխարհում մեզ բնակեցնել: Աստված լինելով մեր արարիչն ու ամեն վայրկյան մեզ պահպանողը՝ կամենում է մեր բացար-

ձակ Տերը լինել, ինչպես որ ցանկանում է, որ Իրեն հնազանդվենք ու հավաքարմաբար ծառայենք:

Սաքանան էլ իր հերթին է ուզում մեր Կերը լինել և ամեն ջանք, հնարք գործադրում է, որպեսզի մեզ իր գերինները և Կան բնակիչը դարձնի: Ուրեմն պետք է որոշել՝ կամ Աստծուն ծառայել, կամ սաքանային գերի լինել:

Երկուսից մեկը պիտի ընտրել: Ես էլ այս պահին Եղիա մարգարեի՝ հրեաներին ուղղված խոսքը պիտի կրկնեմ. «Եթե Տեր է Աստուած՝ երթայք զհետ Նորայ, եւ եթե Բահաղն իցէ՝ երթայք զհետ Նորայ» (Գ. Թագ. ԺԸ 21), ու ավելացնեմ երկուսից մեկը. եթե Քրիստոսին ընտրենք ձեզ Կեր, Քրիստոսին պիտի ծառայեք, եթե սաքանային՝ նրան գերի պիտի լինեք:

Թերևս շարքերը պիտի ասեն՝ ո՞վ պիտի Քրիստոսի ծառայությունը գերությանը փոխի, ո՞վ է ուզում սաքանային գերի լինել: Ո՞վ է ուզում չարությամբ լի, աշխարելի այս աշխարհում ապրել: Իրավ, այդպես պիտի լինեք, բոլորս Քրիստոսին պիտի ծառայեինք ու բարի աշխարհի ունենալ ըղձայինք: Եվ երանի՜ այդպես լինեք: Առաքյալն ուսուցանում է, որ այս աշխարհը, աշխարհացած աշխարհը սիրողը չի կարող Աստծուն էլ սիրել, և ով բարեկամ է աշխարհին՝ թշնամի է Աստծուն. «Ոչ զիպէ՞ զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն Աստուծոյ» (Ղակ. Դ 4): Սակայն կան մարդիկ, որ թե՛ սաքանային են ծառայում և թե՛ Քրիստոսին ու երկուսից էլ հապուցում են սպասում, սաքանայից՝ այս աշխարհի զվարճությունների ու ունայնությունների վայելք, իսկ Քրիստոսից՝ արքայության հավիտենական փառք:

Սակայն մարդու բնությանը խորք, ոչ հարիր այս կեցվածքի՝ մասին զգուշացնում է Քրիստոս և ասում, որ անկարելի է երկու Կերերի ծառայել և երկուսին էլ գոհացնել. «Ոչ ոք կարէ երկուց Կերանց ծառայել. կամ զմին ապիցէ եւ զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ եւ զմիւսն արհամարհիցէ» (Մաթթ. Զ 24):

Նայենք սուրբ հայրերի վարքին: Նայենք, թե բազմաթիվ մեղավորներ դարձի գալուց հետո ինչպես վարվեցին: Բոլորն էլ Քրիստոսի ծառայությանը նվիրվեցին: Դարձից հետո Քրիստոսից բացի այլևս ուրիշ Կիրոջ չծառայեցին: Աշխարհից ու իրենց նախկին սովորություններից երես դարձրին՝ զիպակցելով, որ չի կարելի միաժամանակ աշխարհի ու Քրիստոսի հետևողը լինել, հնարավոր չէ աշխարհի ու Քրիստոսի Կրված կանոնները մեկտեղ պահել, անկարելի է Աստծուն և սաքանային մեկտեղ ծառայել:

Աստծուց բարի ենք արարված, բարի է արարված նաև այս աշխարհը, և մեր սրտերը հուշում են, որ Աստծուն պետք է ծառայել, Ով մեր ճշմարիտ Տերը, մեր Արարիչն ու Փրկիչն է, և Նրանով պետք է մեր ամեն վայրկյանը լցնենք:

Ի՞նչ է ապա Քրիստոս Իրեն հետևողներին պարվիրում: Նրամայում է, որ Աստծո օրենքներն զգուշությամբ պահեն, Ավետարանի կանոններով ապրեն, Իր առաքելություններին ու Իր օրինակին հետևեն: Այսինքն՝ ինչպես որ Ինքը միշտ խոնարհ ու համբերող եղավ, հորդորում է, որ նրանք էլ այդպիսին լինեն:

Սակայն ի՞նչ խոնարհություն, ի՞նչ համբերություն է Նրա ուզածը: Թերևս կամենում է, որ մարդիկ ամբողջ կյանքն անապափո՞ւմ ապրեն, թե՞ ուզում է, որ հաց ու ջրով միայն ապրեն, թերևս մարմինները զրկանքի ենթարկեն, հարսպությունից հրաժարվեն և աղքատության մեջ ապրեն: Ո՛չ, բավ լիցի, Քրիստոս այս բաները չի պահանջում: Նա կամենում է միայն,

որ ամեն մարդ իր վրա ուժ գործադրի, իր անարգ կրքերը սպանելու, իր վար սովորությունները զսպելու, հավաքով և բարոյական կյանք ապրելու, անձնասիրության հեղ պայքարելու համար: Կամենում է նաև, որ ամենքս մեր խաչն ունենանք: Պարտադիր չէ, Իր և Իր առաքյալների նման արյուն թափենք, չարչարվենք ու նահապտակվենք, այսօր օրերն էլ փոխվել են, այլ վիշտ, նեղություն, հալածանք ու ինչ ձախորդություն որ Աստված մեր բարիփոխվել են, այլ վիշտ, նեղություն, հալածանք ու ինչ ձախորդություն որ Աստված մեր բարիքի համար ուղարկում է մեզ՝ առանց քրտնջալու կրենք, և եթե հարկ կա՝ նահապտակվենք: Աստված ցանկանում է, որ մարդն Իր երկից գնա, ապա «ուրասցի գանձն, եւ առցէ զխաչ իւր եւ եկեսցէ» (Մարթ. ԺԶ 24):

Այս ամենով հանդերձ, սակայն, քանի որ մարդկային մեր րկար բնությամբ ընկրկում ենք կատարելու մեզ պարսկիրվածը, Քրիստոս՝ մեր բարեգութ Տերը, մեզ սրբապնդելու և բոլոր դժվարությունները վերացնելու համար Իր օրինակը մեր առջև դրեց: Ինքն արեց Իր իսկ պարսկրածները: Անգամ օգնություն և շնորհ խոստացավ մեզ: Բավական է միայն խնդրենք և սրբանց աղոթենք, «եւ քացի ձեզ... զի ամենայն որ խնդրե՝ առնու» (Ղուկ. ԺԱ 9-10):

Շնորհից ու օգնությունից բացի, խոստանում է, որ ճշմարիտ խաղաղություն պիտի վայելենք և խղճի հանդարտություն ունենանք. «խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ ի վեր է քան զամենայն միտքս, պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտքս» (Փիլ. Դ 7): Մեր ողորմած և բարեգութ Տերը՝ Քրիստոս, մեր կրած նեղությունների, Իրեն ծառայելու, հնազանդվելու, մեր խաչը կրելու, Աստծո արքայության ակն ունենալու համար պիտի ասի մեզ. «Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետք ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մուր յուրախութիւն Տեառն քո» (Մարթ. ԻԵ 23):

Սակայն կան մարդիկ, ովքեր ամաչում են քրիստոնեություն ընդունել, կան մարդիկ էլ, ովքեր ամաչում են իրենց հավաքը, իրենց բարեպաշտությունը հայտնել, ովքեր ամաչում են խոստովանության գալ, հաղորդվել, ովքեր պարզապես ամաչում են: Պետք չէ այդպիսին լինել, մի՞թե չեն հիշում Քրիստոսի խոսքերը. «Ձի որ ամօք համարեսցի Ձիս եւ զբանս Իմ, զնա եւ որդի մարդոյ յամօք արասցէ՝ յորժամ գայցէ փառօք Իւրովք» (Ղուկ. Թ 26):

Միքելի հավաքացյալներ, ուսրի, Աստծո արքայությանը արժանի լինելու համար, եկեք՝ մի կողմ թողնենք մարդկային նկատառումները, ծառայենք մեկ Տիրոջ՝ Նիսուս Քրիստոսին, չամաչենք բարի քրիստոնյա լինելուց և կրկնենք Պողոս առաքյալի հեղ. «Ոչ եթէ ամօք ինչ համարիմ զաւերարանն»: Թող ձեր բարի վարքը, ձեր բարեպաշտությունը փայլի ուրիշների առաջ որպես օրինակ:

Մի կողմ դնենք մարդկային բամբասանքները և ասենք. «Ի քեզ Տէր յուսացայ, մի ամաչեսցից յափտեան» (Մաղմ. Լ 1): Ո՛վ իմ Տեր, թող ուրիշներն ինչ ուզում են՝ ասեն, ես իմ հույրը Բո վրա եմ դրել և ամենևին էլ չեմ ամաչում Քեզ ծառայելու և քրիստոնյա կոչվելու համար: Ավելին, ինձ համար պարսիկ և պարձանք եմ համարում պաշտել, գովել ու փառաբանել Քեզ, որքան «իցէ կարն իմ» և առանձին կամ բոլորի առաջ «խոստովան եղէց առ Տէր յոյժ բերանով իմով, ի մէջ բազմաց օրհնեցից զՔեզ» (Մաղմ. ԾԸ 30) այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն: